Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական Միության կողմից

WWW.EDRC.AM

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐԻԱՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (ՏԶՀԿ)

© EDRC 2014

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Ներկայացնել Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությունները, ռազմավարությունները և ծրագրերը:
- Նպաստել ոլորտում առկա հանրային ծրագրերի քննարկմանը և քաղաքականության մոնիտորինգի նպատակով դրանց ընտրությանը

ՕՐԱԿԱՐԳ

1. Գյուղատնտեսությունը Հայաստանում
2. Քաղաքականության, իրավական և ինստիտուցիոնալ շրջանակ
3. Գյուղատնտեսության բյուջե
4. Բյուջետային ծրագրեր

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- Հայաստանում գյուղատնտեսությունն ապահովում է ՀՆԱ-ի 20 տոկոսը և զբաղվածության 40 տոկոսը:
- Գյուղատնտեսական հողերը կազմում են 2,052.4 հա, ներառյալ՝
  - միամյա մշակաբույսեր (երկրի ընդամենը հողատարածքի 11 տոկոսը),
  - բազմամյա մշակաբույսեր (2 տոկոս),
  - բազմամյա մարգագետիններ և արոտավայրեր (44 տոկոս):
- Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերն են՝ հացահատիկ, կարտոֆիլ, մրգեր, խաղող և բանջարեղեն, իսկ հիմնական կենդանիները՝ խոշոր եղջերավոր անասուններ և ոչխար:
- Արտադրական ամենաբարձր արժեք ունեցող գյուղատնտեսական ապրանքներն են՝ կովի կաթը, խոշոր եղջերավորների միսը, խաղողը և լոլիկը (FAOSTAT):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- Առկա են 340,000 գյուղացիական տնտեսություններ՝ միջինում 1.4 հա տարածքով (1.1 հա մշակվող հողատարածքով):
- Գյուղատնտեսությունում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 500,000 մարդ (գյուղական զբաղվածության մոտ 75 տոկոսը):
- 2013-ին գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմում է՝ 918.6 մլրդ դրամ՝ ներառյալ.
  - Բուսաբուծություն
  - Անասնաբուծություն
- Ոլորտը դեռևս չի կարողանում ապահովել Հայաստանի պարենային կարիքները, և կառավարության սուբսիդավորման կարիքը մեծ է:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ

- Սպառմանը միտված գյուղատնտեսություն (արդյունաբերական գյուղատնտեսությունը թերզարգացած է և բերքատվությունը ցածր է):
- Մասնատվածության բարձր աստիճանը հանգեցնում է տարածքի սղության, սահմանափակ շահութաբերության և սուղ ֆինանսական միջոցների:
- Երկրի ավելի քան 150,000 հա վարելահողեր և նախկին արոտավարյերի 50 տոկոսը չեն օգտագործվում:
- Հնամաշ մեքենաներ և սարքավորումներ (մեծամասնության օգտագործման ժամկետը գերազանցում է 10 տարին):
- Գյուղատնտեսների կարողությունների պակաս՝ թե տեխնիկական, թե կառավարման հմտությունների առումով:
- Կլիմայական փոփոխությունները (նվազող և անկայուն տեղումներ, բարձր ջերմաստիճան, գետերի հոսունության նվազում, արտակարգ իրավիճակների հաճախականության և հետևանքների վատթարացում):
- Մարքեթինգը, ստանդարտացումը շարունակում են մնալ խնդրահարույց և չբարելավվող հիմնահարցեր, և այլն:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ. ՈՒՂՂՈՐԴՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր
- ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն (ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշում)
- ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն (ՀՀ նախագահի ՆՀ -37- Ն հրամանագիր)
- ՀՀ սննդամթերքի անվտանգության ոլորտի զարգացման ռազմավարություն (2011թ. N 91-Ն) և դրանից բխող գործողությունների ծրագիր (2011թ.)
- Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգ (ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի նիստի N 43 արձանագրային որոշում)
- ՀՀ-ում տավարաբուծության զարգացման 2007-2015թթ. ծրագիր (ՀՀ կառավարության 2007թ. մարտի 22-ի N 336-Ա որոշում)
- ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն (ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի նիստի N 49 արձանագրային որոշում)

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

- ԵՄ գործընկերության և համագործակցության մասին համաձանագիր սկսած 1999թ-ից (ԵՀՔ գործողությունների ծրագիր)
- ՄԱԿ Զարգացման աջակցության ծրագիր 2010-2015 (ՄԱԿԶԱԾ)
- Միջազգային այլ կազմակերպությունները ևս իրենց ներդրումն ունեն գյուղի և գյուղատնտեսության զարգացման խթանման մեջ.
  - EC, UNDP, WB, FAO, USDA, USAID, OXFAM, ACDI/VOCA, EIB,MCA, IDA, Heifer, Caritas, SDC, ADA և այլն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

- Պետական գույքի մասնավորեցման/սեփականաշնորհման մասին ՀՀ օրենք (1997/1999)
- Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենք (2006 թ. դեկտեմբերի 15 Երևան ՀՕ-193-Ն):
- ՀՀ օրենք պարենային ձեռնարկությունների գրանցման, Ստանդարտացման մասին ՀՀ օրենք:
- Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենք (28 դեկտեմբերի 2000 թ. ՀՕ-121, լրացում 2010):
- Օրգանական գյուղատնտեսության մասին ՀՀ օրենք (2008 թ. մայիսի 5 ՀՕ-23-Ն):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ

- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն (ԳԱՀԿ), 2002թ.
- Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչություն, 2006թ.
- Բուսասանիտարիայի պետական տեսչություն, 2006թ.
- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
- Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ)

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ-ԳԳԿԶՌ

1. 2020 թ. գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կգերազանցի 2007-2009թթ. միջին ցուցանիշը 46 տոկոսով:
2. Կդրսևորվի գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թվաքանակի կրճատման միտում:
3. 2020թ. գյուղատնտեսական արտադրանքի իրացվելիությունը կավելանա մինչև 75 տոկոսով, որը կխթանի գյուղատնտեսների ֆինանսական և արտադրական հզորությունների ավելացումը:
4. 2020թ. ընդհանուր մշակվող հողատարածքները կհասնեն 421,000 հա-ի՝գերազանցելով 2007-2009թթ. մակարդակը 39 տոկոսով: Կերային մշակաբույսերի հողատարածքը կընդլայնվի մինչև 155,000 հա-ի: Այսպիսով, 2007-2009թթ. միջին ցուցանիշը կգերազանցվի 2.4 և 16 անգամ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ-ԳԳԿԶՌ

5. Մրգի և բանջարեղենի արտադրության ընդլայնում (ներառյալ խաղող, կարտոֆիլ, անասնակեր): Անասնաբուծության մեջ ոչխարաբուծության և թռչնաբուծության կշռի մեծացում:
6. Հացահատիկի, կարտոֆիլի և բանջարեղենի ընդլայնված արտադրություն՝ համապատասխանաբար 44.6, 34.8 և 34.2 տոկոսով:
7. Կովերի կաթնատվության ավելացում. 1 կովից տարեկան 2035լ կաթի փոխարեն՝ ստանալ 2480լ:
8. Սննդամթերքի և գյուղատնտեսական հումքի արտահանման 3.5 անգամ ավելացում:
9. Սննդամթերքի անվտանգության բարելավում՝ ի հաշիվ հիմնական սննդամթերքների արտադրության ծավալների ընդլայնման:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵ

- Գյուղատնտեսությունը չի հանդիսանում բյուջեի գերակա ուղղություն:
- Գյուղատնտեսության ոլորտի ծախսերը կազմում են ընդամենը պետական բյուջեի ծախսերի 1.9 տոկոսը կամ 23.8 մլրդ ՀՀ դրամ:
- 2014թ. ոլորտի ծախսերը աճել են 5.6 մլրդ դրամով կամ 30.8 տոկոսով:
- Այն շարունակում է փոքր մնալ զբաղվածների հաշվով, ՀՆԱ-ում և պետական ծախսերում ունեցած կշռով:
- Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսության ոլորտի պետական ֆինանսավորումն ունի նվազման միտում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

- 2014 թ. գյուղատնտեսության ոլորտում իրականացվում է 23 բյուջետային ծրագիր:
- Ամենամեծ բյուջե ունեցող ծրագիրը «Գյուղական կարողությունների ստեղծում»-ն է՝ 5 մլրդ դրամ ընդամենը բյուջեով:
- Ֆինանսավորման մեծությամբ հաջորդ ծրագիրը «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրն է՝ 2 մլրդ դրամ բյուջեով:
- «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի բյուջեն կազմում է 1.1 մլրդ դրամ:
- «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագիրը դրսևորել է ֆինանսավորման ամենամեծ աճը՝2013-ի նկատմամբ ավելանալով 87տոկոսով կամ 2.3 մլրդ դրամով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

- Գյուղական կարողությունների ստեղծում
- Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր
- Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում
- Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում
- Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանում
- Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին
- Գյուղական խորհրդատվական ծառայություններ



ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

- Գյուղատնտեսության ոլորտում արտաքին օժանդակությամբ իրականացվում են 3 ծրագրեր.
- Գյուղական կարողությունների ստեղծում
- Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր
- Սննդի անվտանգության կարողությունների զարգացում:

ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ



ՄԱԳ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

	2013 մլն դրամ	2014 մլն դրամ	2014 կշիռ	2014/2013 տոկոս
ՕՊԵԿ զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Գյուղական կարողությունների ստեղծում ծրագիր	2,256.9	3,407.4	28.3	51.0
Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	634.5	872.5	7.2	37.5
Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին	550.0	550.0	4.6	0.0
Գյուղական խորհրդատվական ծառայություններ	297.2	346.5	2.9	16.6
ԴԹ աջակցությամբ իրականացվող Գյուղական կարողությունների ստեղծում դրամաշնորհային ծրագիր	0.0	155.2	1.3	100.0

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

WWW.EDRC.AM

WWW.FACEBOOK.COM/EDRC.ARMENIA